

պայմաններու մէջ, մեծազոյն բարձրագոյն պաշտօնն էր արքայից ասպաստանին վեւրին հսկողութիւնն և հոգածութիւնը, շատ հաւանական է որ այս բարձր և աւագ պաշտօնը արքայից փեսին՝ Սորակալին յանձնուած լինէր»:

Բայտ ալամ՝ թէ որ արքային փեսայ չունենար՝ իր ասպաստանն ալ առանց գլխու կամ սորակալի կը մնար, մինչև որ Ումիդը Հաճին դուստր մը պարգևէր և սա հարսնանար:

Դարձեալ «Սորակալ»ը իբր փեսայ իմանալով կարդացէր Բուզանդի տողերը. «գիրարդ... ասպանանէր զՍորակալ ասպաստանին արքային Պարսից» — ասպաստանին փեսան. խաչիսարի մեկնութիւնն արժէքը կարծեմ բացայայտ է:

Եզրակացնելով մեր վերի դիտողութիւնները կը կրկնենք թէ Սորակալ բառը ցարդ գոհացուցիչ լուծում մը գտած է չէ:

ՄԻՀՐԻԱՏ Յ. ԹՐԵԱՔԵԱՆ

Դ. ԽՄԲ. — Պ. Թրեաքեանի ներկայ յօդուածին պատասխանը պիտի տրուի Բազմագլխի յանդի թիւով:

ՄՍԱՀԱՆԻ ԶԱՅՐՈՄԱՀԱԼ ԳԱԽՈՐ

(Աղբ-գրութիւն - Պարսկան ասպաստան-թիւն)

(Շար. տես Բազմ. 1924, էջ 359)

Ք.

Նշանաւոր տօներ. — Նոր-տարի. — Ծնունդ և Ջրօրնէք. — Ս. Սարգիս. — Վարդանանց տօն. — Տիտանյութառաջ. — Բարկեղան. — Մեծ պատ. — Փոթթոթիկ. — Քառասուն մանկուք. — Խաղաղարթար. — Չարչարանաց շարթի աւագ հինգշաբթի օրը. — Չարչարանաց շարթի աւագ ուրբաթ գիշերը. — Զրա. գալոյց. — Չատիկ. — Համբարձում. — Հոգեզարուտ. — Լուսաւորի նշխարաց գիւտ. — Վարդավառ. — Վերափոխում Աստուածածնի. — Սուրբ Խաչ. — Ս. Գեորգ:

Չահարմահալում բնակող մի բուռն գաղթական հայ գիւղացիներն ունին մի շարք ժողովրդական տօներ, որոնց մէջ ցայտուն կերպով ցուցաբերուած է գիւղական կենսոյն իր բազմազան տեսարաններով ու երևոյթներով: Այդ տօներին

միջոցով դուք ծանօթանում էք գիւղացիների բնտանեկան կենսոյն, նրանց նիստուկացի, սովորութիւնների, ծէսերի, հատապախների, կերակուրների, խնջոյքների և խաղերի հետ: Լսում էք նրանց զրոյցները, օրհնանքներն ու երգերը: Տեսնում էք գիւղական տիպերը, իրենց տեսքով և կերպարանքով: Ահա գիւղացի քահանան, իր խաչ ու խաչմատով և խունկ ու բուրդաւորով. նա մերթ եկեղեցու մէջ է, տաճարի առաջ, մերթ գերեզմանատանը և մերթ օջախներում. ամէն տեղ նա խնկարկում է և օրհնում: Ապա պարուս նանու ու տաւոր, իրենց օրհնանք-համբոյրներով: Ահա գեղձուկ կանայք, իրենց քաղցր զրոյցներով և խնդ ու ծիծաղով: Ահա ջահէլ հարսներն ու աղջիկները, իրենց համբարձման ծաղիկներով և երգ ու բոյրով: Ահա շիւան տղերքը, իրենց նախշուն ձիւներով: Ահա և աշուղը, իր ջօղգուտով: Բոլորն էլ կանգնած ձեր առաջ խօսում են, զրուցում, երգում, պարում, խնդում, ծիծաղում և ուրախանում:

Դուք այդ բոլորը տեսնում էք գիւղական տօների մէջ:

Ընդհանրապէս տօն օրերին Չահարմահալցիները չեն աշխատում և բոլոր տօներն էլ, իբրև պապանեկան աւանդներ, մի առանձին սրբութեամբ և յարգանքով են տօնում: Այդ օրերում է, որ խեղճ գիւղացիները մոռանում են իրենց դարդ ու ցանքը, խորատուգում անցնելի քաղցր յիշողութիւնների մէջ և համակուծ մի շարք ուրախ և տխուր զգացմունքներով: Ահա այդ տօների պատկերները:

Նոր-տարի. — Նոր-տարան՝ գիւղացիները «Տարեմուտ» կամ «Կաղանդ» են ասում: Այդ օրը, առաւօտեան կանուխ, կանայք «Տարին» են թխում, իբրև Նոր-տարայ նշան. դա խմորից պատրաստած կլոր և հաստ մի բաղաւթ է, որի մէջ գնում են չամիչ, նուշ և մայանայ: Բաղաւթները մէկ մէկ փող են դնում. ուտելու ժամանակ ում ձեռքը որ գալիս է փողով բաղաւթը, ասում են. «Տարին նրա գլխին է», այսինքն նա է տարայ տըրը և այդ տարի նա պիտի բախտաւոր լինի:

Առաւօտեան քահանան պատարագ է կատարում եկեղեցում, ուր հաւաքում են բոլոր գիւղականները: Պատարագից յետոյ գիւղացիները մէկիկ-մէկիկ համբուրում են քահանայի աշը և շօրհնա տէր, շնաւոր Նոր-տարի՝ ասելով՝ շնորհաւորում են Նոր-տարին, ապա հաւաքւում են եկեղեցու դռան առաջ և միմեանց շնորհաւորում «տարիդ շնաւոր ընի» ասելով, որին պատաս-

խանութ են. «Զեզանով, ձերն էլ շնաւոր ըլնի» : Անուհետեւ տղամարդիկ խմբովին գնում են՝ քահանայի տունը Նոր-տարին շնորհաւորում. քահանան օրհնում է նրանց, շնորհաւորում Նոր տարին, ապա հիւրասիրում է թէյով և ճաշով : Հաշից յետոյ գիւղացիները, քահանայի հետ, գնում են քեաղխուղաների տները. շնորհաւորում գիւղապետների «կաղանդը» և հիւրասիրում են թէյով : Անուհետեւ նորից խմբովին շրջում են տնից տուն և շնորհաւորում Նոր-տարին :

Այդ օրը կանայք էլ խմբովին շրջում են տները, միմեանց շնորհաւորում և օրհնութիւններ մըմնջում :

Քու նոր-տարին շնաւոր ըլնի,

Քու հօր տնովը,

Քու խիզանովը,

Քու դարիքներովը :

Բարսեղ կենտրացու օրհնութիւնը

Քու տան ու տեղի վրայ ըլնի :

Նոյն օրը նորափեսաները գնում են աներանց տունը, համբուրում աներոջ և զոքանչի ձեռքերը, 10-20 դռան փող են նւէր տալիս վերջինիս և տառնում են մի զոյգ գուլպայ կամ մի գլուխ չանդ և կամ կապայ :

Երեւոյ և Պորսնէի. — Տեղական բարբառով կոչւում է «Ջրօխնէք» : Կի շաբաթ Մնացած Ջրօրհնէքին, բոլոր գիւղացիները, առանց բաւաստութեան, պաս են պահում, իսկ «Ճրգալուծ» օրը ծով են մնում ու երեկոյեան հաղորդւում : Փամբերգութեան համարեա բոլորն էլ ներկայ են լինում, յատկապէս «Դանիէի» գրքի ժամանակ, որ կարգում են մանուկները. նրանցից մէկը սեղանի ցիւր կողմը կանգնած կարգում է Դանիէի պատմութիւնը, իսկ Սեդրակի, Կի-սաթի և Աբէղիակովի օրհնութիւնը կարգում են երեք մանուկներ միասին, կանգնած սեղանի աջ կողմը : «Որհնեցէք» երգում են ցածից :

Փամբերգութիւնից յետոյ ժամաւորները վերադառնում են տուն. կանայք իսկոյն վառում են իրենց տան ճրագները, ապա տան բոլոր անդամները իրենց «պասը բանում» : Երեկոյեան ընթրիքին, բոլոր տներուէլ էլ, փլաւ են ուտում :

Կի քիչ յետոյ մանուկները-տղաներն ու աղջիկները — առանձին խմբեր կազմած շրջում են տների կտուրները. նրանք իւրաքանչիւր տան երգիկից մի «եսայլա» (թաշկինակ) են կախում և երգում :

Յնծացէ՛ք, ուրախացէ՛ք,

Պատկը բացէ՛ք,

Մէ բուռ ամէ՛ք :

Անլուրիւ, ալէլուիա :

Տիեցիները թաշկինակի մէջ ածում են մի բուռ չամիչ կամ աղանց (բոված ցորեն) և կամ ծայրին 1-2 դռան փող են կապում :

Այդ երեկոյ քահանան շրջում է սպառու հօտի տները, «Զօգւոց» է ասում և մխիթարում :

Նոյն ճրագալոյց երեկոյին նշանադրւած երիւտասարդները մատուցարանի մէջ գնում են տասներկու քաթայ, մի հատ մում, ինը ձու, մի չարէք չամիչ, մի դոմրի (աման) հալւայ, մի աման հիւսյ և նւէր են ուղարկում իրենց նշանածին :

Միւս առաւօտեան ժամերգութիւնն սկսում է շատ շուտ. համարեա բոլոր գիւղացիներն էլ շտապում են հեկեղեցի, ուր պատարագից յետոյ կատարում է մեռոն թափելու հանդէսը : Որհնած ջուրը մեծ ջնիւռնաղութեամբ լցնում են բաժակները և խմում. ոմանք էլ տուն տանում և մաքուր հողով շաղախում, որ տեղական բարբառով կոչւում է «մեռոնհող», որը պահում են առանձին ամաններով : Երբ մի որ և է աման պղծում է, այսինքն մուկ կամ մի կեղտոտ բան է ընկնում մէջը՝ միոռն հողով լանում են :

Ենիգեան շաբաթւայ ընթացքում տղամարդիկ և կանայք շրջում են միմեանց տները և շնորհաւորում «Ջրօխնէք» շնաւոր ըլնի, ուրան հասնեք սուրբ յարութիւն» ասելով, որին պատասխանում են. «Զեզանովով. միոռնի օրհնութիւնն իրգնի վրայ ըլնի» :

Նոյն շաբաթւայ ժամանակամիջոցին քահանան շրջում է բոլոր տները և օրհնում :

Մ. Սարգիս. — Ս. Սարգսին գիւղացիներից շատերը հինգ օր, Բշ. օրից մինչև Շաբաթ, պաս են պահում. շատերն էլ միաժամ են բռնում, այսինքն օրը միայն մի անգամ են հաց ուտում, որպէս զի Ս. Սարգսին իրենց մուրազը կատարէ : Շաբաթ օրն առաւօտեան պատարագ է մատուցւում և գրեթէ բոլորը գնում են հեկեղեցի : Այդ օրը շատերը մատաղ են անում և «չալաթի», այսինքն անխմոր հաց են պատրաստում, եկեղեցի տանում և ժամբերգութիւնից յետոյ բաւաճանում են ժամաւորներին : Թէ ինչից է առաջ եկել մատաղ անելու և հաց բաժանելու սովորութիւնը, գիւղացիներն իրենք էլ չեն իմանում :

Այստեղի կանայք հաւատում են, որ Ս. Սարգիսը Ուրբաթ գիշեր «ձիւլվորցած» ման է գալիս

տները: Ուստի քնելու միջոցին տան ալրից առանձին ամանով դնում են իրենց ալրի փեթակների վրայ, որպէս զի Ս. Սարգսի ձին ոտը դնի վրան և ալրը «բարաքաթօվ» լինի: Գիշեակ սովորութիւնները, սակայն, հետզհետէ վերանում են:

Վարդանանց տօն. — Պատմական այս տօնին բացի եկեղեցական ծիսակատարութիւնից մի առանձին ուշադրութեան արժանի բան չի կատարում:

Ճեւարմանդանա՞ր՝. — Չահարմանդները հայոց հին, հեթանոսական այս տօնին ասում են «Տըրեղէզ»: Այդ օրն երկոյնան զրեթէ բոլոր գիւղացիները գնում են եկեղեցի: Նոյնպէս նոյապակ հարսները, որ մինչև այդ օրն իրաւունք չեն ունենում տանից դուր գալու, իրենց սկեսրոց հետ գնում են եկեղեցի:

Ժամերգութիւնից յետոյ ժամաւորները հաւաքում են եկեղեցու դռան առաջ և իսկոյն երեխաներն ու երիտասարդները զազից՝ վառելիք չեղչ են կազմում, որի շուրջ նորապսակները ձեռքերին մի մի վառած մում առնելով՝ կանգնում են: Ապա քահանան թափոր է կատարում: Այս միջոցին նորապսակներն իրենց ձեռքի մոմերով կպցնում են շեղջը, որից յետոյ տղամարդիկ, մանաւանդ երիտասարդներն ու երեխաները ցատկում են խորոյկի վրայով և զարճանում, իսկ ամուլ կանայք «չլլա են կլտում», այսինքն երեք անգամ պտտում են խորոյկի շուրջը և մոխիրից ածում իրենց մէջքին, որպէս զի երեխայ ունենան: Նոյն միջոցին նորապսակների սկեսուրներն իրենց հետ բերած չամիչը բաժանում են ժամաւորներին: Մինչ այս բոլորը կատարում է և խորոյկը վառում, գիւղացիները հետաքրքրութեամբ դիտում են, թէ ծուխը որ կողմն է գնում, որովհետև հաւատում են, որ թե՛ ծուխն իրենց ցանած արտերի վրէպայով գնայ՝ հասկը «բարաքաթօվ» է լինելու:

Երբ խորոյկը հանգչում է, տղաներն ու աղջիկները խլիւում են մոխիրը, տանում իրենց տները և ածում դռան առաջ, որպէս զի տան անդամներին վտանգ չպատահի. կամ ալրի փեթակն և ցորենի քաթի (ամբարի) տակ են չաղ տալիս, որ «բարաքաթօվ» լինի. կամ ածում են

հաւատան առջև, որպէս զի հաւերը շատ ձուածեն. և կամ ածում են գոմի առջև, որպէս զի կովերն ու ոչխարներն կաթ տան, ցաւից ու չոռից ազատ մնան և այլն:

Միւս առաւօտեան եկեղեցում պատարագ է լինում:

Քարիկիկան. — Բարեկենդանին գիւղացիներն ասում են «բարգէնդաք»: Այս շաբաթւայ մէջ, մանաւանդ վերջին երկու օրերը, Շաբաթ և Կիրակէ, մօտիկ ազգականներ և ծանօթ բարեկամներ միմեանց մօտ հաւաքւելով՝ իրաւից կերակուրներ՝ փլաւ, ձազեղ, հաւայ, բրշտուկ, զաթայ, խորոված, եսնիք, դաթղ՝ մ'ածուն՝, սոյմա և այլն պատրաստում և ուտում են, խմում, երգում, պարում, ուրախանում:

Շաբաթ օրը նորապսակ փեսաների տան պատրաստում են քաթայ, ձու, հաւայ, չամիչ և ուղարկում են հարսենց տունը: Նոյն օրը նորափեսան գնում է աներանց տունը, բայց երիտասարդները ճանապարհին բռնում են նրան և ծեծելով տանում զոքանչի մօտ ու ասում:

Փէսա, փէսա,
Գաթէս տուր:

Ընդհանրապէս հարսանիքները լինում են բարեկենդանին:

Խժժ պառ. — Մեծ պատին Չահարմանդիներն ասում են «Աղուհաց» կամ «Յախացաց», որ պահում են ամենայն հըղութեամբ: Պատի մենաառաջին օրը՝ երկուշաբթի առաւօտեան, գիւղացիները գնում են եկեղեցի, որպէս զի լսեն «Ղաջարուք» — սրբացարութք: Ժամերգութիւնից յետոյ բոլոր ժամաւորները համբուրում են քահանայի աջը և շնորհաւորում Քրիստոսի ապաշխարանքը: Այնուհետև գիւղի ժողովուրդը խմբովին գնում է քահանայի տունը և պատը շնորհաւորում. «պատը շնաւոր ըլնի», որին քահանան պատասխանում է. «ուրախ հասնիք սուրբ յարութիւն». ապա ժողովուրդին հիւրասիրում է ճաշով, որ մատուցանում է ընդհանրապէս մախրի և քֆտայ կամ չիրա և օգոջաբ: Ճաշից յետոյ խմբովին գնում են քեպանիթարի տունը և պատը շնորհաւորում, ապա հիւրասիրում են թէյով կամ ճաշով: Այնուհետև շլշում են միմեանց տները և պատը շնորհաւորում:

Ընդհանրապէս պատի երկուշաբթի առաւօտեան վաղ՝ արեւադարին նորահարսներն ու աղջիկները կժերն ուսած՝ աղբիւրն են իջնում ջրի, որպէս զի տանը «բարաքաթ» լինի: Այնտեղ միմեանց շնորհաւորում են պատը, խնդում, ծի-

1. Դա տօնն է կրակի չափածուն՝ Միհրին, որին է պատու աճն տարի կապալաւ Հայերը խորոյկներ էին վառում, ինչպէս սարգում, խորոյկի բոլորը շուրջ պար էին գալիս ու երգում:

ծաղում: Գետոյ կժերն լցրած, ալբերի ափերից
դալար խոտ փնջելով՝ վերադառնում են տուն և
շնորհաւորում իրենց կեսրոջ ու կեսրայրի պատը.
նրանք էլ օրհնում են այսպէս.

Եղիկէք,
Ծլէք,
Էս խոտի պէս՝
կանքնընէք:

Իսկ նորափեսաները գնում են իրենց աներոջ
և նրա բարեկամներին տները, շնորհաւորում պատը
և մի գոյգ գուլպայ նւէր ստանում:

Նոյն օրը կեսուրը հրամայում է հարսներին,
որ տան բոլոր ամանեղէնները մոխրով չորեն և
մաքրեն, որպէս զի «ուղտսովէն» կերակուրներից
«լացարութ - սրբացարութ» լինի:

Փոքրորսիկ (Տիտուս կիւրախէ՛. — Այդ օրը
պառաւ կանանց կիրաւկէն է: Առաւօտեան քա-
հանան ղօղանջում է եկեղեցու զանգակը: Պառաւ
կանայք իրենց հետ նւէրներ, — մի լանգառի
ցորեն կամ քֆտա, մեղր և կամ մի դուան փող
առած՝ շտապում են եկեղեցի, ուր քահանան
հոգոց է ասում նրանց ննջեցալինքի համար և
ստանում նւէրները: Այս սովորութիւնը, սա-
կայն, վերանալու վրայ է:

Քառասուն մանկունք. — Միշուհի ուրբաթ
իրկուան կոչում է «Քառասուն մանկունք»: Այդ օրը
գիւղացիները մի մի աման ձէթ առած
գնում են եկեղեցի և ձէթն ածում «Քառասուն
մանկունք» կոչւած տաշտի մէջ: Դա պատրաս-
տում են այսպէս. տաշտի մէջ կիտով չափ շուր
են ածում, ապա քառասուն ծակ ունեցող տա-
փակ խաւած և մի փայտի վրայ քառասուն պատ-
րոյգ անցկացնելով՝ իջեցնում են ջրի մէջ, յետոյ
ձէթ են լցնում և պատրոյգները վառում: Գիւ-
ղացիները փոխաբերական մաքով բացատրում
են, թէ տաշտը լինն է, իսկ պատրոյգները քա-
ռասուն մանուկները, որոնք Ղահնեղ չեն լի-
նում: Նոյնպէս այս սովորութիւնը հետզհետէ վի-
րանում է:

Դրազգարար. — Եղիկազարդին գիւղացիներն
ասում են «Դրազարթար»: Դաբաթ երեկոյ ջա-
հէլ տղերքը գնում են գիւղի ծառատանները և
ուռնեռու ճիւղեր կտրելով՝ տանում են եկեղեցի և
դնում սեղանի առջև, որ քահանան օրհնէ: Միւս
առաւօտեան վաղ գիւղացիներից շատերը շտա-
պում են եկեղեցի, ուր, դեռ պատարագը չօգտած,
քահանան օրհնում է ուռնեռու ճիւղերը. անմի-
ջապէս բոլոր երեխաները մի մի փոքրիկ ուռի

ճիւղ առնելով՝ մի քանի խմբեր են կազմում և
տնից տուն շրջելով երգում.

Դրառ զարթար, ծառին զարթար,
Սև եգին սև սամաթէլ.
Կարմիր եգին նօզ ու կօճաթ,
Հնկէրս ընգաւ ծօփն ու ծառաւ.
Բաշին էկաւ կեռ-կեռ կտուց.
Ապրի ձեր դաքօրցոցն,
Տվէք իմ էրկու ձուն:

Տնեցիները սովորաբար ձու, չամիչ, աղանց
կամ փշատ են տալիս:

Ժամերգութիւնից յետոյ օրհնած ճիւղերը բա-
ժանում են զրեթէ բոլոր ժամաւորներին, որոնք
տուն տանելով՝ դնում են պատերի արանքները,
որպէս զի տունն օրհնւած մնայ և վտանգ չպա-
տահի:

ՎԻԿԵՆԱ ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ
(Շարունակելի)

ԼԵԶՈՒԱԳԻՏԱՆԻ

ԵՐԵՄԵԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԵՍ

Ա

Խ Ն Դ Ի Բ Ը

Հրատապ պայքարի և հայկական պատ-
մութեան էջերուն մէջ արձանագրելի օրեր
էին անոնք, 1922ի Յունիսի օրերը, ուր
կոստանդնուպոլիսի Հայութիւնն աւելի մօ-
տէն կը ծանօթանար հայ Ոստանին մէջ
հաստատուած նորահար ուղղագրութեան,
զոր այլանդակ կը գտնէր: Հոն Հայ Ա-
րուեստի Տունը փութաց կազմակերպել
հրապարակային մեծ վիճարանութիւն՝ այդ
խնդրին վրայ, արդիւնքը հաղորդելու հա-
մար Երևանի, — զոր սակայն խափանեցին
վերահաս քաղաքական պատահարները:
— կատարուեցան երկու մեծ գումարում-
ներ, որոց մէջ խոնած էր մեծագոյն մասն
արեւմտահայ և հոն ներկայ. կովկասեցի
մտաւորականութեան, մի քանի հարիւր
հոգի, հզօր ու հանդիսական բողոք մը